«ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ – 15»

2009 թ. նոյեմբերի 26-ից 28-ը ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում կայացավ «Հայ ժողովրդական մշակույթ» գիտաժողովի հերթական 15-րդ նստաշրջանը, որը նվիրված էր ինստիտուտի հիմնադրման հիսունամյակին: Թերևս այդ էր պատճառը, որ այն աչքի էր ընկնում զեկուցումների բազմաքանակությամբ և թեմաների լայն ընդգրկումով. մասնակցում էին գիտնականներ Հայաստանից (ԳԱԱ ՀԱՐ, ԵՊՀ, Մատենադարան, ՀԱՊԹ, ՀՊԹ և այլն), Իրանից (Թեհրանի համալսարան), Ռուսաստանից (Ռուսաստանի պետական հումանիտար համալսարան), Գերմանիայից (Տյուբինգենի համալսարան), Լեհաստանից (Պոզնանի Ադամ Միցկևիչի անվան համալսարան), որոնք ինը նիստերի ընթացքում ներկայացրին շուրջ 60 զեկուցում:

Զեկուցումները բաժանված էին մի քանի թեմատիկ խմբերի. առաջին խմբի (նիստ 1) զեկուցումներն առնչվում էին հյուսելու արհեստներին: Լ. Ավանեսյանը, *գորգի ծագմանն ու ծիսական կիրառությանը վերաբերող զեկուցմամբ, փորձեց այն (գորգը) տանել շատ վաղ ժամանակներ, կապել նույնիսկ քուրքի և բրդի պաշտամունքի հետ՝ գրեթե դեպի նեոլիթյան հեղափոխություն: Գորգի թեման շարունակվում էր* Ա. Պողոսյանի *«Խնձորեսկ» խմբի մի տիպի գորգերի ծագման ու արեալային տարածման հարցի շուրջ» զեկուցմամբ:* Ս. Պողոսյանը *քննեց զարդահամալիրները՝ ավանդականից մինչև մերօրյա պրեստիժային զարդերը նոր խավերի մոտ: Գործվածքի թեման շարունակեց* Կ. Բազեյանը՝ *խոսելով գործվածքի ու դրա հետ կապված արհեստների մասին, որոնք տարածված են եղել հայոց ավանդական կենցաղում, և որոնք, սակայն, մնում են թերի ուսումնասիրված: Հյուսման ընդհանուր թեմային էր հարում նաև* Ս. Պապիկյանի *ներկայացրած զեկուցումը, որը վերաբերում էր ցորենից հյուսված խաչփնջերին հայոց երկրագործական հավատալիքների համակարգում:*

Մյուս թեմատիկ խումբը միավորվում է ծեսերի քննարկումով, և սկսվում հարսանեկան ծիսակատարություններին նվիրված մի քանի զեկուցումներով: Լ. Վարդանյանը *ներկայացրեց «Հայոց ամուսնա-հարսանեկան ավանդույթների արդի դրսևորումները սոցիալ-մշակութային փոխակերպումների համատեքստում»՝ վերջին երկու տարվա դաշտային նյութերի հիման վրա: «Կարմիր խնձոր» ծեսին էին նվիրված հաջորդ երկու զեկուցումները.* Գ. Շագոյան՝ *«Թագվերացից՝ Կարմիր խնձոր. Կուսության ինստիտուտի «կրոնական» և «ազգային» ծիսականացումը», և* Ա. Պողոսյան՝ *«Կարմիր խնձոր» ավանդույթի փոխակերպման որոշ առանձնահատկություններ»:* Ա. Մխիթարյանը *ներկայացրեց հարսանիքը՝ ըստ միջնադարյան ձեռագրային նյութերի: Քննարկումների ընթացքում առաջ քաշվեցին մի քանի հետաքրքիր հարցադրումներ այն մասին, թե որքանով է եկեղեցականն ու ժողովրդականը միահյուսվել, թե մի կողմից ինչպես են ձեռագրերը պահպանել ժողովրդական ավանդույթները, իսկ մյուս կողմից, ինչպես է եկեղեցին*

փորձում պայքարել ժողովրդական ավանդույթների դեմ: Հարսանիքը ավանդաբար դիտարկվել է որպես ինիցիացիա՝ անցման ծես: Ս. Մելիքյանը *ներկայացրեց նման ծեսի մեկ այլ օրինակ. «Նվիրագործման ծեսի մի եզակի նմուշ Բանանցում», որը նա գրանցել է այդ փորձառությունն ունեցած բանասացներից, որտեղ գլխավորն այն է, որ տղաներին բանակ գնալուց առաջ ոտքից կախում էին ծառից: Այդ ծեսը հեղինակը փորձել է կապել հարսանեկան ծեսին: Բանակային թեմայից սահուն անցում կատարվեց* Ա. Հակոբյանի *զեկուցմանը՝ «Բռնությունները դարաբաղյան կոնֆլիկտի ժամանակ 1988–1990 (կառուցում և իրականություն)»:* Ա. Դիլանյանն *էլ ներկայացրեց բռնության մի տարատեսակի՝ «վանդալիզմ» հասկացության ընկալման շուրջ հարցադրումներ՝ սկսած նրանից, թե ինչպես է եզրաբառը մտել գործածության մեջ:*

Զեկուցումների մեկ այլ խումբ էլ (նիստ 3) վերաբերում էր արժեհամակարգային խնդիրներին և ենթամշակույթներին: Ա. Թադևոսյանը *«Հասարակական համագործակցության ձևերի որոշ դրսևորումներ ետխորհրդային շրջանում» զեկուցմամբ փորձեց տեսական ամփոփումներ անել, որի միջոցով, օրինակ, կարելի է հասկանալ, թե ինչպես է գործում կոռուպցիան, ինչպես է այն տեղավորվում հասարակական մեխանիզմներում:* Լ. Աբրահամյանը *«Գվարդիաներից» մինչև թաղային հեղինակություններ. Երևանի սոցիալական տարածքի կազմակերպման շուրջ» վերնագրով զեկուցմամբ ներկայացրեց մի երևույթի ընդհանուր ուրվագիծը, որը նկատելի էր Խորհրդային Հայաստանում. ըստ մի վարկածի՝ որպես կառույց օրենքով գողերը ստեղծվել են սովետական համակարգի կողմից, որոնց վերացնելու համար հիսունականներին ստեղծվեցին գվարդիաներ, վերջիններիս վերացնելու համար էլ ստեղծվեցին դրուժիններ: Զեկուցումը պարունակում էր նաև անդրադարձ այն հարցին, թե ինչպես է այդ համակարգը արտահայտվում քաղաքի տարածական կառուցվածքում:* Հ. Պիկիչյանի *զեկուցմամբ դիտարկվում էին ռաբիզի և հեռուստատեսության խնդիրներ «Շաբաթ երեկո» հեռուստածրագրի օրինակով՝ մասնավորապես նկատելով, թե ինչպես է հեռուստադիտողը դառնում դրա մի մասը, և ինչպես է ռաբիզը մտնում ընտանիք: Բավականին թեժ քննարկվեց ռաբիզ երևույթին գնահատականներ տալու և վերաբերմունք արտահայտելու անհրաժեշտության հարցը:* Յ. Անտոնյանի *ելույթը վերաբերում էր «համակարգչային» սերնդի խնդիրներին, մասնավորապես հայ բլոգերների գործունեությանը:*

Ռ. Ամիրաղյանը *(«Միֆերը հայաստանյան քաղաքական դիսկուրսում») վերլուծեց 2008 թ. ՀՀ նախագահի գլխավոր թեկնածուներ Ս. Սարգսյանի և Լ. Տեր-Պետրոսյանի ելույթներում արտահայտված առասպելաբանական պատկերները. Ս. Սարգսյանի մոտ՝ կայունության և ընտանիքի գաղափարը, Լ. Տեր-Պետրոսյանի մոտ փրկչի ու փրկչության առասպելը, որոնք, պահանջված են հասարակության մեջ:* Ս. Մկրտչյանը *Վրաստանի դպրոցական դասագրքերի խորհրդային և ետխորհրդային խմբագրումների վերլուծության օրինակով ցույց էր տալիս, թե ինչպես են պատմության մասին պատկերացումները փոփոխվում դասագրքում՝ պատմությունը կոնստրուկտիվ ձևով ներկայացնելու, ձևափոխելու և ժամանակի քաղաքական իրողություններին հարմարեցնելու միտումով:* Է. Ներսիսյանցը *(«Այլ հանդիպում օտարի հետ. Ջուլֆայի ազգաբանության ի հայտ գալը») քննեց*

Նոր Ջուղայի ազգաբանության տարբերությունները դասական գաղութատիրական ազգագրությունից:

Զեկուցումների հաջորդ խումբը (նիստ 4) վերաբերում էր կրոնական խնդիրներին. Հ. Պետրոսյանը *(«Կենաց մատյանը հայ մշակույթում. գաղափարաբանությունն ու պատկերագրությունը») կարևոր մի շարք խնդիրների հետ ներկայացրեց մի օրինաչափություն. ի տարբերություն հանգուցյալին հիշատակելու արդի կանոնների, որ ուղղված են այցելուին, ողբացողին, միջնադարյան ավանդույթը ուղղված է հենց հանգուցյալի փրկությանը:* Ա. Իսրայելյանը *ներկայացրեց գորտի հմայական գործառույթները հայոց հավատալիքներում:* Ա. Գուլյանն *անդրադարձավ մերօրյա սրբապաշտությանը Շիրակում,* Զ. Համբարձումյանը՝ *«Տան սուրբ» հավատալիքային համալիրը Գեղարքունիքի մարզի բնակչության արդի կենցաղում, իսկ* Կ. Շչիկերսկին *քննեց ժողովրդական քրիստոնեության մեկ այլ տարր՝ Իջևանի շրջանի Ակնաղբյուր գյուղի «Վարդան Մամիկոնյանի ծառը» և դրա շուրջը զարգացող ոչ միայն ժողովրդական հավատալիքների համակարգը, այլև տեղական նոր երևույթներ՝ կապված քաղաքականության ոլորտի հետ:* Լ. Ժուկովան, *ըստ Ռուսաստանում և Իսրայելում իրականացրած դաշտային հետազոտությունների, խոսեց ռուս հուդայականների և նրանց ինքնության փնտրտուքի մասին:*

Մյուս խումբը (նիստ 5) միավորվեց տոների ընդհանուր խորագրով: Ս. Մկրտչյանը *ազգագրական և էթնոսոցիոլոգիական տվյալների հիման վրա ամփոփեց Զատիկ տոնի օրինաչափությունները հայոց ավանդական և արդի կենցաղում:* Հ. Աբրահամյանը *«Վարդավառի տոնախմբությունը և Անգեղակոթի Սուրբ Վարդան Զորավար եկեղեցին» զեկուցմամբ քննեց, թե ինչպես են փոխկապակցվում Վարդավառի տոնախմբությունն ու Վարդան զորավարի կերպարը:* Գ. Ստեփանյանը *երիտասարդների ժամանցի նոր ենթամշակութային ոլորտում քննարկեց ակումբային ժամանցը և բացահայտեց արխաիկ տոնին հատուկ շատ առանձնահատկություններ:* Ռ. Ծատուրյանը *դիտարկում էր տոնական հյուրասիրության առանձնահատկությունները արդի հայաստանյան նյութի հիման վրա՝ մասնավորապես քննարկելով ամոթի և հեղինակության գործոնը:* Թ. Զաքարյանն *էլ փորձում էր տեսնել, թե ըստ արդի տվյալների, ինչպես են դրսևորվում փոխօգնության ձևերը Տավուշի և Սյունիքի մարզերի բնակչության շրջանում:*

Ռ. Օհանջանյանի՝ *ՀՀ գյուղական և քաղաքային բնակավայրերում գեղարվեստական մշակույթի սպառման առանձնահատկությունների վերաբերյալ զեկուցումը յուրատեսակ կամուրջ էր հաջորդ նիստի (նիստ 6) համար:* Հ. Մելքումյանը *հանդես եկավ «Վերնիսաժային «բարախոլկա». սոցիալ-տնտեսական երկու մոդելների դիտարկում» զեկուցմամբ:* Ն. Մարգարյանը *Երևանի տաքսիների անվանումների ազգագրական դիտարկումով ցույց տվեց, թե ինչպես են այդ տաքսիները դրսևորվում որպես յուրատեսակ շարժունակ տարածքներ և անդեմության պարագայում անհատականության տարրեր մտցնում կենցաղում:*

Շ. Ղազարյանը *Գյումրի և Երևան քաղաքների օրինակով քննեց մարդկանց միջև միջանձնային տարածության պահպանման օրինաչափությունները:* Ս. Ֆեիլինգսը *ներկայացրեց, թե ինչպես են կառուցվում անհատական և հասարակական տարածքները Երևան մուտք գործած օտար ազգագրագետի դիտանկյունով:*

Հ. Հարությունյանը *ազգագրության պատմության տեսանկյունից բավականին կարևոր զեկուցում ներկայացրեց Հովհաննես Թումանյանի և Թիֆլիսի հայոց Ազգագրական ընկերության փոխառնչակցությունների վերաբերյալ: Ներկայացված էին նաև թանգարանագիտական բնույթի երկու զեկուցում (*Ա. Գրիգորյան *և* Մ. Մկրտչյան*):*

Մյուս խմբում (նիստ 7, 8) բանագիտական և բանասիրական զեկուցումներն էին միավորված: Ա. Պետրոսյանը *դիտարկեց Ֆիդայու կերպարը հայ բանահյուսության մեջ,* Ա. Սարգսյանը *ներկայացրեց «Լոռու երգիծական մանրապատումները (պատմական և կառուցվածքային համառոտ անդրադարձ)» վերնագրով զեկուցումը, որտեղ գլխավորապես դրսևորվում էր լոռեցու յուրահատուկ ազգագրական կերպարը:* Ա. Սահակյանն *էլ ներկայացրեց հայկական անեկդոտի հերոս ապարանցու յուրահատուկ կերպարի ծագումնաբանության վարկածը. Ապարան անունը սերում է դեռևս XVI դ. Ռշտունիքի Ապարան սրբավայրի տարածքներից Արևելյան Հայաստան գաղթած բնակիչների նախկին հայրենիքից:* Ս. Վարդանյանը *և* Հ. Մարգարյանը *անդրադարձան Արմավիրի մարզի բանահյուսական արդի դրսևորումներին:* Վ. Սվազլյանի *զեկուցմամբ մեզանում առաջին անգամ հետազոտության առարկա է դառնում ամերիկահայերի բանահյուսությունը:* Ս. Վարդանյանը *ներկայացրեց «Զանգեզուրի բանահյուսությունը Մերո Խանզադյանի գրառումներում» զեկուցումը:* Ժ. Խաչատրյանն *էլ անդրադարձավ Վանո Խոջաբեկյանի նկարներում պատկերված, այսօր արդեն կորած ծեսերի ու պարերի վերականգնման հնարավորություններին:* Լ. Սիմոնյանը *տարբեր տեսանկյուններից քննեց Թնաթորոսի կերպարը և թե ինչպես է այն պահպանվել Տերսիմից ներգաղթածների մոտ:* Զ. Ծատուրյանը *փորձեց ցույց տալ «Սասնա ծռեր» էպոսում նախնիների պաշտամունքի դրսևորումները:* Ն. Դիլբարյանը *ներկայացրեց անվան և անվանադրության հետ կապված հիմնահարցեր, մասնավորապես Հայաստանի լեռնանունների տեղանվանահիմքերը լեզվաբանական դիտանկյունից՝ ընդգրկելով և՛ ժողովրդականը, և՛ կաղաստրի սովետական շրջանում ստեղծված լեռնային անունները և օրինաչափությունները:* Թ. Հայրապետյանը *դիտարկեց անվանադրության օրինաչափությունները հայ ժողովրդական հեքիաթների հերոսների անունների օրինակով:* Ե. Զաքարյանը *«Հավերժական խավարի բնակիչը՝ կույրը» զեկուցմամբ ներկայացրեց բանահյուսական կույրի կերպարի տարբեր դրսևորումները:* Է. Խեմչյանի *զեկուցումը վերաբերում էր անմահական ջրի մոտիվին հայ բանահյուսության ալեքսանդրյան (Ալեքսանդր Մակեդոնացի) սյուժեներում:*

Վերջին խումբը (նիստ 9) ընդգրկում է զեկուցումներ, որոնք վերաբերում են տարբեր խմբերի սոցիալական հրատապ խնդիրների: Ա. Վանյանը *անդրադարձավ գենդերային խնդիրներին և դրանց դրսևորումներին աշխատանքային շուկայում,* Ա. Մնացականյանը *ներկայացրեց ծնողական խնամքից զուրկ երեխաների խնամքի կազմակերպման հիմնախնդիրները ետխորհրդային շրջանում:* Ն. Գալստյանը *քննեց հասարակական կազմակերպությունների ձևավորման առանձնահատկությունները Հայաստանում:* Ռ. Կարապետյանի *զեկուցումն առնչվում էր Հայաստանի բնակչու-*

թյան տնտեսական գործունեության էթնոսոցիալական գործոններին՝ հիմնված վերջին վեց տարիների հետազոտությունների վրա: Մ. Գալստյանը *Օմսկի հայկական համայնքի ձևավորումը դիտարկեց աշխատանքային միգրացիայի համատեքստում:* Ա. Ստեփանյանը *ներկայացրեց «Սփյուռքահայերն Արցախում. Արդի գործընթացներ» զեկուցումը, որտեղ նկարագրվում էր իրավիճակը, քննվում հայրենադարձության և «օտարի» հետ կապված հարցերը:* Հ. Խառատյանը *և* Շ. Խաչատրյանը *քննեցին Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների միջազգային իրավունքի նորմերը՝ մասնավորապես ասորիների օրինակով ցույց տալով, թե ինչպիսի պարադոքսների կարող է բերել միջազգային իրավական նորմերի անհարկի և ոչ արհեստավարժ ընդունումը:* Կ. Նալբանդյանը *և* Ն. Քոչարը *խոսեցին ասորիների գենետիկ համասեռության մասին ֆիզիկական մարդաբանական տեսանկյունից:*

Հատկանշական էր եռօրյա նստաշրջանի քննարկումների գիտական հագեցվածությունը:

ՍԱԹԵՆԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ